17. ՍՎԵ՛ԴԻ, ՉԱԼ ՍՎԵ՛ԴԻ

Կ'էղնի սիվտակմուրուս խալիվոր մի, ուր կնիկ: Խալիվոր կ'էլի չվան կը թաՙլա ուր թև, կէրթա պրակ: Կը տեսնա ուր ագանի մեծ գզի մի կոճ հոդ է: Կ'էլի էրկու բալթա օր կը զանի, մորքով մարթ մի կ'էլի դուս:

Կ'սէ. - Խալիվո՛ր, զիմ տուն մի քակե, առ էնա սուֆրեն, տար քզի: Ճամբախ չըսիս.

Սո՛ւֆրա, չալ սուֆրա
Սո՛ւֆրա, զքի տեսիմ:

Խալիվորն է, կը բերե զետ սուֆրեն, կըսե.

Սո՛ւֆրա, չալ սուֆրա,
Սո՛ւֆրա, զքի տեսիմ:

Սուֆրեն կը բացվի, եղան կաթ մեչն է, կուտե, կը խմե, կըսե.

Սո՛ւֆրա, չալ սուֆրա,
Սո՛ւֆրա, զքի տեսիմ:

Կը կողպվի, կառի կիգա տուն:

- Կնի՛ՀՂ, - կըսե, - սուֆրե մի բերիր իմ, չըսիս. «Սո՛ւֆրա, չալ սո՛ւֆրա, սո՛ւֆրա զքի տեսիմ»:

Կնիկն է, օր մարթ կ'էլի դուս, կ'ըսե. «Սո՛ւֆրա, չալ սո՛ւֆրա, սո՛ւֆրա զքի տեսիմ»:

Սուֆրեն կը բացվի, եղվնեկու կաթ հինի կը գտվի: Կուտե, կը կշտանա, կ'էլի կախա պատեն:

Էտ մարթ կ'էրթա, էլմ զիր գզի կոճ կիտա հառջև, կացնի:

Էտ միրքով մարթ կը թռնի դուս:

Կ'ըսէ. - Սիվտակ մուրուս խալիվոր, զիմ տուն մի քակե, առ զինա էրկանք: Կը տանիս, ճամբեն չըսիս.

Էրկա՛նք, չալ էրկանք,
Էրկա՛նք, զքի տեսիմ:

Խալիվորը կառնի կիգա տուն: Ճամբին կ'ըսե.

Էրկա՛նք, չալ էրկանք,
Էրկա՛նք, զքի տեսիմ:

Էրկանք կ'առնի ինքնին աղալ, ալուր կը թափի:

Կը բերա տուն, կնկան կ'ըսե. էրկնքին չըսիս.

Էրկա՛նք, չալ էրկանք,
Էրկա՛նք, զքի տեսիմ:

Մարթ օր կ'էլի դուս, կնիկն է, կ'ըսե.

Էրկա՛նք, չալ էրկանք,

Էրկա՛նք, զքի տեսիմ:

Էրկանք ինքինք կ'աղա, ալուր կը թափի:

Էտ մարթ էլմ կ'էրթա, զէտ կոճ կը տփե: Էտ միրքով մարթ կը թռնի դուս. կըսե. - Խալիվո՛ր, զիմ տուն մը քակե, առ էտ Դուխուբուռ, տար քզի, չ'էրթաս ճամբախ ըսես. - Չո՛ւ, զըռ ու զըռ:

Խալիվոր կ'առնի կիգա, կըսե. - Չո՛ւ, զըռ ու զըռ:

Էտ էշ պոչ կը վերու ու օսկին կը թափի իշու մոտեն: Կը ժողվա ու կիգա զօսկին:

- Կնիկ, - կըսե, - զէշ էրա թավլեն. չըսիս՝ «Օ՜շ, զըռ ու զըռ»:

Կ'էլի էդ խայն կ'էրթա, զէտ կոճ կիտա հէռջև կացնի:

Էտ միրքով կ'ըսե. - Իրեք բարութին տվեր իմ քզի, հերիք չէ՞, առ էնա սվեդին, տար քզի: Չէրթաս ճամբախ ըսիս.

Սվե՛դի, չալ սվեդի,
Սվե՛դի, զքի տեսիմ:

Խալիվոր կ'առնի կիգա, կ'ըսե.

Սվե՛դի, չալ սվեդի,
Սվե՛դի, զքի տեսիմ:

Սվեդի կ'էլի զխայն կը թաքնե գետին, կը զարկե, կը զարկե, խայու ֆսլիքը կ'էրթա, կ'ըսե. - Բա՛ս, բա՛ս:

Կը պրծի, պատի գետին:

Կը բերե, կըսե. - Կնիկ, էտ սվեդին առ կախե պատեն, չ'էղի ըսիս.

Սվե՛դի, չալ սվեդի,

Սվե՛դի, զքի տեսիմ:

Խալիվոր էլավ գնաց հոդե մի. ծանդր նստած, դիվան կէնին հոնի: Սվեդին ուր հետն է: Կ'ըսե, վո՞ր գինա, ըսե՝

Սվե՛դի, չալ սվեդի,

Սվե՛դի, զքի տեսիմ:

Սվեդին կ'էլի, զէտ հոդի մախլուխ կը տփե, բիրադի կը ջարդե, կը թողե:

Մեկ նոքարմ' էնտըղեն կը կանչե. «Բա՛ս, բա՛ս»: Սվեդին կը պրծի, պատի գետին:

Խալիվոր կ'առի ուր սվեդին, կը բերե կախե ուր պատեն: